

© Եվրոպայի խորհուրդ / Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2012թ.:

Սույն թարգմանությունը կատարվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային հիմնադրամի աջակցությամբ (www.coe.int/humanrightstrustfund): Այն չի պարտավորեցնում Դատարանին: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ամբողջական նշումը սույն փաստաթղթի վերջում:

© Council of Europe/European Court of Human Rights, 2012 .

This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court. For further information see the full copyright indication at the end of this document.

© Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2012.

La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour. Pour plus de renseignements veuillez lire l'indication de copyright/droits d'auteur à la fin du présent document.

Դատարանի նախադեպային իրավունքի վերաբերյալ տեղեկատվական նշում թիվ 79

2005թ. հոկտեմբեր

Անհետևեր-Բուշ Ինկ. ընդդեմ Պորտուգալիայի **73049/01**

Վճիռ - 11.10.2005թ. [Բաժին II]

Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված

Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված

Սեփականություն

Պայմանագրի հիման վրա առևտրային բրենդ գրանցելը ներպետական ծառայությունների կողմից մերժելը, որն սկսել է գործել գրանցման դիմումը ներկայացնելուց հետո. խախտում չկա:

Փաստեր. Դիմող կազմակերպությունն արտադրել է գարեջուր և վաճառել այն աշխարհի մի շարք երկրներում «Budweiser» բրենդային մակնիշի ներքո: 1981 թվականին այն դիմել է Պորտուգալիայի Արդյունաբերական սեփականության ազգային ինստիտուտին (INPI) «Budweiser»-ը որպես ապրանքանիշ գրանցելու համար: INPI գրանցել է ապրանքանիշը 1995 թվականին՝ այն բանից հետո, երբ

դատարանը որոշում է կայացրել «Budweiser»-ի նախկին գրանցումը՝ որպես չեխական կազմակերպության պիտակ, չեղյալ համարելու մասին: Այդուհանդերձ, չեխական կազմակերպությունը բողոքարկել է այդ որոշումը, իսկ Լիսաբոնի վերաքննիչ դատարանն անտեսելով «1986 թվականի համաձայնության» հիման վրա Պորտուգալիայի և Չեխոսլովակիայի միջև երկկողմ պայմանագիրը, որն ուժի մեջ էր մտել 1987 թվականին և պաշտպանել գրանցված ապրանքանիշը, որոշել է, որ «Budweiser» ապրանքանիշի գրանցումը դիմող կազմակերպության կողմից պետք է չեղյալ ճանաչվի: Դիմող կազմակերպությունը դիմել է Գերագույն դատարան, սակայն՝ ապարդյուն:

Օրենք. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված:

Մտավոր սեփականությունն անժխտելիորեն ենթակա է պաշտպանության Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ներքո, սակայն տվյալ գործով խնդիր այն է, որ պետք է հստակորեն պարզել, թե ապրանքանիշի պաշտպանության իրավունքը երբ է դառնում «սեփականություն»՝ այդ դրույթի իմաստով: Ապրանքանիշի գրանցման համար դիմած կազմակերպության իրավական դրությունն անվիճելիորեն առնչվում է կոնկրետ տնտեսական շահերի, և «Budwieser» մականիշով բրենդի ճանաչումը տալիս էր դրան ակնհայտ տնտեսական արժեք: Դիմող կազմակերպությունը, այդպիսով, ուներ տնտեսական շահ, որը կարող էր ենթարկվել որոշակի իրավական պաշտպանության, սակայն բավականաչափ ուժեղ չէր, որպեսզի հանգեցներ օրինական սպասման, որն արտացոլում էր Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված պաշտպանությունը: Դիմող կազմակերպությունը չէր կարող համոզված լինել «Budwieser» ապրանքանիշի սեփականատեր լինելու հարցում, քանի դեռ այն հաստատապես չէր գրանցել դրա մականիշը, քանի որ չեխական կազմակերպությունը վիճարկել էր նրա իրավունքն օգտագործելու ապրանքանիշը՝ դրա վերաբերյալ գրանցման դիմում ներկայացնելու պահից: Ապրանքանիշը չի հանգեցնում «սեփականության» Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, քանի դեռ այն վերջնականապես գրանցված չէ համապատասխան պետությունում գործող կանոնների համապատասխան: Այդպիսով, դիմող կազմակերպությունը չի ունեցել սեփականություն, երբ 1986 թվականի համաձայնագիրը մտել է ուժի մեջ, իսկ Պորտուգալիայի դատարանների կողմից պայմանագրով նախատեսված իրավունքները չեն ոտնահարվել: Համապատասխանաբար, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի չէ, հետևաբար այն չի կարող լինել խախտված:

Եզրակացություն. խախտում չկա (հինգ ձայնով՝ ընդդեմ երկուսի):

© Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2012թ. :

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պաշտոնական լեզուներն են անգլերենը և ֆրանսերենը։ Սույն թարգմանությունը կատարվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային հիմնադրամի աջակցությամբ (www.coe.int/humanrightstrustfund)։ Այն չի պարտավորեցնում Դատարանին, ինչպես նաև Դատարանը թարգմանության որակի համար որևէ պատասխանատվություն չի կրում։ Այն կարող է ներբեռնվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի HUDOC նախադեպային իրավունքի բազայից (<http://hudoc.echr.coe.int>) կամ Դատարանի կողմից տրամադրված ցանկացած այլ բազայից։ Այն կարող է վերարտադրվել ոչ առևտրային նպատակներով, այն նախապայմանով, որ նշված լինի գործի ամբողջական անվանումը՝ վերոնշյալ հեղինակային իրավունքի տեղեկատվական նշումի հետ մեկտեղ, ինչպես նաև վկայակոչվել Մարդու իրավունքների հավատարմագրային հիմնադրամը։ Սույն թարգմանության ցանկացած մասի առևտրային նպատակով օգտագործման անհրաժեշտության դեպքում խնդրում ենք դիմել հետևյալ էլ. փոստի հասցեով. publishing@echr.coe.int

© Council of Europe/European Court of Human Rights, 2012.

The official languages of the European Court of Human Rights are English and French. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court, nor does the Court take any responsibility for the quality thereof. It may be downloaded from the HUDOC case-law database of the European Court of Human Rights (<http://hudoc.echr.coe.int>) or from any other database with which the Court has shared it. It may be reproduced for non-commercial purposes on condition that the full title of the case is cited, together with the above copyright indication and reference to the Human Rights Trust Fund. If it is intended to use any part of this translation for commercial purposes, please contact publishing@echr.coe.int.

© Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2012

Les langues officielles de la Cour européenne des droits de l'homme sont le français et l'anglais. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour, et celle-ci décline toute responsabilité quant à sa qualité. Elle peut être téléchargée à partir de HUDOC, la base de jurisprudence de la Cour européenne des droits de l'homme (<http://hudoc.echr.coe.int>), ou de toute autre base de données à laquelle HUDOC l'a communiquée. Elle peut être reproduite à des fins non commerciales, sous réserve que le titre de l'affaire soit cité en entier et s'accompagne de l'indication de copyright ci-dessus ainsi que de la référence au Fonds fiduciaire pour les droits de l'homme. Toute personne souhaitant se servir de tout ou partie de la présente traduction à des fins commerciales est invitée à le signaler à l'adresse suivante : publishing@echr.coe.int